թեամբ այցելած է Ս. Յակոբ. իր Պատմութեան մէջ կը գրէ. «Եւ եղև ի գալն մեր յԵրուսաղէմ, յորժամ հասաք ի Հալէպ՝ պատահեցաք այս Սարգիս քահանային». վերջինս ակնավաճառ և լեզուագէտ հայ քահանայ մը ըլլալով՝ իր Վասն ականց գրուածքը կը յանձնէ Առաքել վրդ.ի, որ կը կցէ զայն իր Պատմութեան՝ զոր գրած է Փիլիպպոս կթղի. հրամանով։ Դավրիժեցին վախճանած է 1670ին, ծեր հասակին մէջ և թաղուած Ս. Էջմիածնի գերեզմանատունը։

ԱՌԱՔԵԼ ՎՐԴ. ԷՏԻՐՆԷՑԻ, Մբ.—1680ին, Լս. Ս. Յակոբայ։

ԱՌԱՔԵԼ ՎՐԴ. ԼԻՎՈՌՆԻՈՅ, Մբ. — Աստուածատուր Պե., ըստ Սիսականի (էջ 451) նամակ մը կը գրէ (1657 Մարտ 14) խօջայ Քթռեչենց Թէոդորոսի խնդրելու համար Լիվոռնիոյ հովիւ կամ նուիրակ Առաքել վրդ.ի հոգեբաժինը և կը յիշէ խօջայ Գրիգոր Բաբերդցին. «Եւ նպաստ հայցելով յայլոց եւս վաճառականաց տեղւոյն. որպէս ամաւ յառաջ գրեալ էր. և առ խօջայ Աւուզ»։

ԱՌԱՔԵԼ ՎՐԴ. ԿԷՕԼՊԱՇԵՑԻ, «ի նահանգէն Կոստանդինի», Մբ.—Ռձիբ (= 1673)ին Ս. Յակոբի մէջ ընդօրինակել կուտայ Նարեկացիին Աղօթագիրքը. հաւանաբար նոյն անձն է որ 1658ին, Ս. Յակոբայ Մատ.ին կը յիշատակէ Զեռ. Շարական մը (ՄՁ. թ. 227) հետևեալ յիշատակարանաւ. «Այլ և ես Կօլպաշցի լուսարար տէր Առաքելն կրկին ստացա զչարակնոցս ի հալալ արդեանցս ի թվական հայկազուն սեռի Ռձէ (=1658)ին, և եղի յիշատակ ի դուռն սբ. Յակոբայ»։ (Խաչ. Ցուց. տեար ԺԸ. էջ 1403), վերի Աղօթագրքին չահեկան յիշատակարանն է հետևեալը (ՄՁ. թ. 389)

«Ես Առաքելս Կօլպաշեցի,
Ի նահանգէն Կոստանդնի
Եռափափաք սիրով մեծի՝
Դիմեալ յերկիրս Պաղեստինի,
յԵրուսաղէմ սբ. քաղաքի,
Ողորմութեամբ ամենակալի
Տեառն մերոյ կենարարի՝
Եկեալ ի սբ. երկիրս հասի։
Ի թվականի Հայոց մեծի,
Ռձէ աւելի (=1658)
Կայեալ առ ոտս Սբ. Յակոբի՝